



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

0026, ք.Երևան, Գ.Նժդեհի 23, հեռ. 44-88-94, էլ.փոստ.criminalcourt@armenico.com

ԳՈՐԾ հ. ԿԴ/0078/01/10

04 փետրվարի 2011թ.

ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎԱՀԱՁՈՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝  
ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ

Ձեր պահանջի համաձայն Ձեզ է տրամադրվում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 03.02.2011թ. դատարանի կազմին հայտնաձև ինքնաբացարկի միջնորդությունը քննության առնելու մասին որոշումը:  
Կից՝ որոշումը 1 օրինակից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԻՆ ՀԱՅՏՆԱԾ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿԻ  
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03.02.2011թ.

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
Ե.ԴԱՐԲԻՆՅԱՆ  
Ս.ՉԻՉՈՅԱՆ

Խորհրդակցական սենյակում քննության առնելով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ջնյառյանի կողմից դատարանի կազմին ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդությունը,

Պ Ա Ր Չ Ե Յ

Սույն գործով դատարանին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ իրավունքը բացատրելիս տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝ Ա.Ջնյառյանը, ինքնաբացարկի միջնորդություն ներկայացրեց դատարանին, պատճառաբանելով, որ դատարանի կազմը իրենց կողմից «վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և քրեական գործը վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին» 17.01.2011թվականի որոշմամբ անտեսելով տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի կողմից ներկայացրված վերաքննիչ բողոքի պահանջը՝ վերաքննության կարգով դատական նիստ նշանակելու անհրաժեշտության մասին, որոշել է դատաքննության վճռաբեկության կարգ սահմանել:

Բացի այդ, դատարանը իր որոշմամբ չի անդրադարձել վերաքննիչ բողոքի պահանջներին ամբողջությամբ:

Ինքնաբացարկի միջնորդությանը միացան նաև տուժողի իրավահաջորդ վարդան Խալաֆյանը, ամբաստանյալ Ա.Հարությունյանը և նրա պաշտպան Ս.Մաֆարյանը:

Վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով բերված միջնորդությունը, հանգում է այն հետևության, որ բերված միջնորդությունը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Կողմի վերաքննիչ բողոքի պահանջի մասը վերաբերվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 360-րդ հոդվածով նախատեսված հարցերի շրջանակին, որոնք վերաքննիչ դատարանը վարույթ ընդունելու որոշման մեջ ներառել է: Իսկ ինչ վերաբերվում է պահանջի մնացած մասին՝ որոնք վերաբերվում են քննչական գործողություններ կատարելուն, ապա դատարանը իր որոշմամբ հղում կատարելով ՀՀ քր. դատ. օր.-ի 382-րդ հոդվածի 3-րդ մասի կանոններին, արձանագրել է, որ կողմերը կարող են նշված գործողությունները կատարելու միջնորդությամբ հանդես գալ դատաքննության համապատասխան փուլում:

Այսպիսով, վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ բերված միջնորդությունը չի բխում ՀՀ քր. դատ. օր.-ի 88-րդ, 90-րդ հոդվածների պահանջներից:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ, 313-րդ հոդվածներով, վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝ Ա.Ջնյալյանի, դատարանի ամբողջ կազմին ինքնաբացարկ ներկայացնելու միջնորդությունը, մերժել:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ  
Իսկականի հետ ճիշտ է:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝



Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ